ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՑՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 00 67, էլ. փոստ՝ meo@ypc.am

**Դիտորդ մարմնի կազմը**

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Սուրեն ԴԵՀԵՐՅԱՆ
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մարգարիտա ՄԻՆԱՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Արեւիկ ՍԱՀԱԿՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

*Բերդ համայնքի պաշտոնյա Վաղարշակ Գրիգորյանի հասցեին tiv1.am կայքում վիրավորական արտահայտություններ պարունակող հրապարակումների վերաբերյալ փաստաբան Էլեն Սարգսյանի ներկայացրած դիմումի կապակցությամբ*

## Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2025-ի դեկտեմբերի 26-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին է դիմել փաստաբան Էլեն Սարգսյանը՝ տեղեկացնելով, որ լրագրող Էդգար Բաբայանը Ֆեյսբուք սոցիալական ցանցում եւ «Թիվ 1 Մեդիա» ՍՊԸ-ին պատկանող tiv1.am լրատվական կայքում Բերդ համայնքի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության եւ անշարժ գույքի կառավարման բաժնի պետ, իր վստահորդ Վաղարշակ Գրիգորյանի պատիվը եւ արժանապատվությունը արատավորող, զրպարտություն եւ վիրավորանք պարունակող բազմաթիվ հրապարակումներ է արել: Մասնավորապես, ըստ դիմումի, ՀՀ վարչապետին ուղղված բաց նամակում եւ մեկ այլ՝ ռուսալեզու հրապարակման մեջ Վ. Գրիգորյանին վերագրվել են հանցագործություններ, այն դեպքում, երբ մեղսագրվող արարքների վերաբերյալ քրեական վարույթ հարուցված չէ եւ հետեւաբար, հանցանքի մասին վկայող դատական վճիռ չկա: Դիմումատուն Դիտորդ մարմնից ակնկալում է գնահատել Ֆեյսբուքում Էդգար Բաբայանի մի շարք հրապարակումների եւ tiv1.am կայքում 03.07.2025թ. «Սահմանամերձ Բերդ քաղաքում ներդրումային միջավայրի արհեստական խոչընդոտների վերաբերյալ» վերնագրով հոդվածի եւ 29.11.2025թ. «Как долго центральная власть будет закрывать глаза на то, что Берд живёт в режиме параллельного государства?» հոդվածի համապատասխանությունը լրագրողական էթիկայի սկզբունքներին:
2. Քննության առնելով դիմումը՝ Դիտորդ մարմինը փորձել է կապ հաստատել tiv1.am կայքի հետ եւ պարզաբանումներ ստանալ, սակայն կայքը չի արձագանքել:

## Բ. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

### I. Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

1.1. Մինչեւ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ։

1.4. Փաստերի եւ տեղեկությունների շարադրանքը հստակ սահմանազատել կարծիքներից, վերլուծություններից եւ մեկնաբանություններից,

1.5. Վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի եւ հավաստի տեղեկությունների վրա։

6.2. Պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, եւ պատասխանի հնարավորություն ընձեռել բոլոր նրանց, որոնց հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում։

### II. ԶԼՄ-ների դիտորդ մարմնի աշխատակարգ

5.3. Ինքնակարգավորման նախաձեռնության (ԻՆ) անդամ չհանդիսացող ԶԼՄ-ների հրապարակումների վերաբերյալ բողոքները կարող են քննվել տվյալ լրատվամիջոցի համաձայնության դեպքում: Այսուհանդերձ, տվյալ ԶԼՄ-ի համաձայնության բացակայության դեպքում ԴՄ-ն իրեն իրավունք է վերապահում ԻՆ ոչ անդամների հրապարակումների վերաբերյալ բողոքների քննությունից հետո ընդունել եւ հրապարակել փորձագիտական կարծիք կամ հայտարարություն:

## Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Քննելով Բերդ համայնքի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության եւ անշարժ գույքի կառավարման բաժնի պետ Վաղարշակ Գրիգորյանի շահերի ներկայացուցիչ Էլեն Սարգսյանի դիմումը՝ Դիտորդ մարմինը արձանագրում է.

- tiv1.am կայքում հրապարակված տեղեկություններ պարունակող երկու նյութերում տեղ են գտել Վաղարշակ Գրիգորյանի հասցեին հնչեցված մի շարք պնդումներ, որոնք ներկայացված են որպես փաստական տեղեկություններ, սակայն չեն ուղեկցվում որոշակի ապացույցներով կամ համապատասխան աղբյուրներով: Մասնավորապես, հայերեն հրապարակման մեջ նշվում է, որ Վաղարշակ Գրիգորյանը «անցնում է մի քանի քրեական գործերով», ինչպես նաեւ արվում են պնդումներ, թե

«սա քաղաքական վրեժ է», եւ որ ներդրումները խեղդվում են «պաշտոնական ապօրինությունների պատճառով»։ Ռուսալեզու հոդվածում օգտագործվում են ձեւակերպումներ, ըստ որոնց, Գրիգորյանը «քրեական գործերի հանցակից է եւ վկա» («соучастник и свидетель уголовных дел»), «անցնում է քրեական գործերով» («фигурант уголовных дел»), ինչպես նաեւ հիշատակվում է «քրեական դրվագների բազմամյա հետքը» («многолетний шлейф уголовных эпизодов»)։

Նշված ձեւակերպումները կարող են ընկալվել որպես հանցագործության կամ անօրինական վարքագծի դրսեւորում, մինչդեռ նյութերում բացակայում են այդ պնդումները հիմնավորող պաշտոնական աղբյուրներ, փաստաթղթեր կամ հղումներ, ինչպես նաեւ ներկայացված չէ Գրիգորյանի կամ համայնքային իշխանության դիրքորոշումը։ Փաստերի եւ գնահատողական դատողությունների սահմանազատման բացակայությունը, ինչպես նաեւ հակառակ կողմին պատասխանի հնարավորություն չտրամադրելը հակասում են Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 1.1, 1.4, 1.5 եւ 6.2 կետերին։

- Դիտորդ մարմինը ձեռնպահ է մնում դիմումի մեջ հիշատակված ֆեյսբուքյան գրառումների վերաբերյալ գնահատական տալուց՝ հաշվի առնելով, որ դրանք արվել են Էդգար Բաբայանի անձնական էջում, բացի դրանից, դրանք այլեւս հասանելի չեն (հեռացվել են կամ թաքցվել)։

Դիտորդ մարմինը հորդորում է լրատվամիջոցներին, մասնավորապես tiv1.am կայքին՝ իրենց հասանելի միջոցներով տարածել սույն Կարծիքը։

**Ընդունվել է 2026թ. փետրվարի 24-ին,**
**ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով**

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
«Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Վանաձորի «Լոռի» ՀԸ գործադիր տնօրեն
Սուրեն ԴԵՀԵՐՅԱՆ
Ampop.am-ի հիմնադիր խմբագիր
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
«Ալիք Մեդիա» լրատվական-վերլուծական կայքի հիմնադիր
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Մարգարիտա ՄԻՆԱՍՅԱՆ
«Ցայգ» հեռուստաընկերության տնօրեն
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
«Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Երեւանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Հանրային հեռարձակողի խորհրդի անդամ
Արեւիկ ՍԱՀԱԿՅԱՆ
Factor TV-ի գործադիր տնօրեն
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՄԱ մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Արմավիրի «ԱԼՏ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորել են Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 100-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնության համաժողովում, 2024 թվականի մայիսի 18-ին: